Известия АН Армянской ССР, Науки о Земле, 1, 16—19, 1974

Ա. Ե. ՔՈՉԱՐՅԱՆ

# ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆԽՈՆՋ ՄՇԱԿԸ

Հովհաննես Գևորգի Մաղաքյանը Հայաստանի երկրաբանական գիտությունների հորիզոնում առաջին անգամ երևաց 1943 թ., Հայրենական պատերազմի ամենաթեժ պահին, այդ արհավիրքի սովետական ժողովրդի համար բարեհաջող ավարտման գործում իր համեստ լուման մուծելուց հետո։ Ճիշտն ասած, համեստ բառը գուցե այստեղ տեղին չէ, քանի որ նա Երևան եկավ լուրջ վիճարի ենթարկված ողնաշարով։

Տողերիս հեղինակը Հովհաննես Մաղաքյանի հետ հեռակա ծանոթ էր դեռ 1946 թ. Լենինգրադի լեռնային ինստիտուտում ուսումնառության ժամանակից, ինստիտուտ, որտեղ նա դասավանդում էր «Մետաղային օգտակար հանածոների հանքավայրերը» և «Մայր ցամաքների մետաղածնության հիմունքները» առարկաները։

Իմ իսկական ծանոթությունը Հովհաննես Մաղաքյանի հետ Երևանում տեղի ունեցավ արտասովոր ձևով։ Մի առավոտ ինստիտուտի բակում հանդիպեցի հյուսն վարպետին, որը անսովոր բարձրության մի զրասեղան էր պատրաստում։ Վարպետը, հումորից զուրկ չէր, իմ այն հարցին, թե այդ զրասեղանն ում համար է պատրաստում, մի անհավատալի պատասխան տվեց. ասում են, Գուլիվերից ավելի բարձրահասակ մի գիտնական է եկել և այս սեղանը դիրեկտոր Ալեքսանդր Դեմյոխինի կարգադրությամբ նրան է տրվելու։

Մի քանի օր հետո, դիրեկտորն ինձ ծանոթացրեց Մաղաքյանի հետ։ Նախ և առաջ, մտքումս դայրացա վարպետի վրա, որն ինձ թյուրիմացության մեջ էր դցել, թե այդ գիտնականը Գուլիվերի նման մի ածդահա է։ Նա, սովորական մի մարդ էր, միայն բնությունը նրան պարգևել էր արտակարգ հույս ու հավատ ներշնչող դիմագծեր։

Ներս մտա աշխատասենյակ, նա կանգնած էր մինչև կրծքավանդակը հասնող սեղանի առաջ և մանրադիտակի տակ ինչ որ նմուշ էր նայում։ Նա խնդրեց, որ ես նստեմ։ Նստեցի ու ապասում եմ, որ ինքն էլ նստի, չնստեց և ասաց, որ իր ողնաշարի վնասվածքը թույլ չի տալիս նստելու, որ նա, առաջիրմ, կարող է կանգնել կամ պառկել։

Մեր առաջին խոսակցությունը ինձ վրա շատ հաճելի տպավորություն թողեց նախ և առաջ իր երկրաբանական լավատեսությամբ, և, երկրորդ, այն առումով, որ ես էլ էի սկսել զբաղվել մետաղային օգտակար հանածոների ուսումնասիրությամբ, որի գծով Հովհաննես Մաղաքյանը արդեն ճանաչված մասնագետ էր։

Այդ զրույցի ժամանակ նա հայտնեց, որ մինչև առողջական վիճակի բարվոքումը զբաղվելու է Հայաստանի տարածքի մետաղածնությունը վերաբերվող ինստիտուտի թանգարանում ցուցադրված նյութերի մանրադնին ուսումնասիրությամբ, իսկ 1944 թ. գարնանից կազմակերպելու է մի արշա-

վախումբ, որի նպատակն է տեղում ուսումնասիրել Հայաստանի բոլոր մետաղային հանքավայրերը և հանքերևակումները, հավաքել անհրաժեշտ այն բոլոր տվյալները, որոնք հիմք կհանդիսանան առաջին մետաղածնական բարտեղը կազմելու համար։

Եվ ահա, կազմակերպվեց ինստիտուտի № 1 արշավախումբը, որին գինվորագրվեց գիտաշխատողների մի մեծ խումբ, այդ թվում տողերիս հեղինակը։

1944 թ. գարնանը Հովհաննես Մազաքյանի արշավախումբը սկսեց իր գործունեությունը Հյուսիսային Հայաստանում, որը հետագա տարիներին ծավալվեց հանրապետության ամբողջ տարածքում։

Մենք հեռու ենք կենսագրական ակնարկ գրելու մտադրությունից, այդ մասին լիարժեք նյութեր են զետեղված տեղեկագրի հոբելյանական սույն համարում։ Միայն կուզենայինք անդրադառնալ Մազաքյանի աշխատանքային ոճի որոշ հարցերին։

Իմ (և ոչ միայն իմ) առաջին տպավորությունը դաշտային հետազոտությունների մասին այն էր, որ մեր արշավախմբի պետը արտակարգ աշխատասեր, կարգ ու կանոն սիրող, ի բնե, ի ծնե սահմանված ռեժիմով ապրող, վերին աստիճանի հոգատար, բարի և միաժամանակ խստապահանջ մարդ է։

Արշավախմբում գերիշխում էր աշխատանքային և կենցաղային կարգապահությունը։ Արշավախմբի ամեն մի մասնակից, լիներ դա հանքանյութերի հասարակ նմուշահավաք, տվագ գիտաշխատող, թե խոհարար, գիտեր իր անելիքները, հանձնարարության կատարման ժամկետը. ինչպես աշխատասեր ամեն մի մեղու իր հանքաբանական հյութը պետք է մուծեր արշավախմբի ընդհանուր «փեթակի» մեջ։

Մազաքյան գիտնականին բնորոշ են նաև ազահաբար փաստեր կուտակելու սերը, շուտափույթ եզրակացություններից հրաժարվելու սովորությունը, «յոթ անգամ չափիր, մեկ անգամ կտրիր» ավանդույթը։

Ասում են, որ շատ լավ է, որ լավ գիտնականը միաժամանակ և լավ մարդ է լինում։ Դա ասված է հատկապես Հ. Մազաքյանի համար։ Նա և լավ մարդ է, և լավ գիտնական։ Հոգատարության վառ օրինակ կարող է համարվել մի դեպք։ Տողերիս հեղինակին հանձնարարված էր հետազոտել և նմուշարկել Սարիդյուղ-Սևքարի շրջանի մանգանի հանքավայրը։ Առաջադրանքս, ըստ իս, լրիվ կատարելուց հետո, Իջևանի շրջանի Սևքար գյուղից 20 կգ մանգանի հանքանմուշները լցրած ուսապարկի մեջ, ոտքով ճանապարհ ընկա դեպի Նոյեմբերյանի շրջանի Կողբ գյուղը՝ արշավախմբի հանդիպմանը։ Ինձ անհրաժեշտ էր անպայման, հենց այդ օրը, տեղ հասնել, քանի որ հաջորդ առավոտ արշավախումբը պետք է տեղափոխվեր Ալավերդու հանքաղաշտը։ Պատահական ուղեկից ավտոմեքենա չլինելու պատճառով ես տեղ հասա լուսաբացին։ Հովհաննես Մազաքյանը մի խումբ գործընկերների հետ դեռ սպասում էր ինձ։ Կարճատև հարցափորձից և ընթրելուց հետո, ես պառկեցի մի քիչ քնելու. իսկ նա ոտքի հանեց արշավախմբի մյուս անդամներին վերահանդիպանելուն պատրաստվելու համար։

Առանց թաքցնելու պետք է ասել, որ արշավախումբը Հայրենական պատերազմի այն ծանր պահին լուրջ դժվարությունների էր հանդիպում սննդի հայթհայթման, փոխադրամիջոցների և այլ հարցերի գծով։ Տարբեր վայրերից երբեմն սննդամթերքներ պարունակող ծանրոցներ էինք ստանում (մեծ

մասամբ ինքը՝ Մաղաքյանը)։ Եվ դրանք չէին բացվում, մինչև արշավախմբի ուշացած անդամը չէր վերադառնում հերթական երթուղուց։ Ծանրոցի պարունակությունը բաշխվում էր արշավախմբի անդամների միջև համաձայն նրանց տարիքի, սեռի և նախասիրությունների։

Ես կցանկանայի նշել մի շատ կարևոր հանգամանք։ Մաղաքյանի ամբողջ արշավախումբը աշխատում էր մեղուի մի ընտանիքի նման, նրա կազմում ոչ մի բոռ, ոչ մի անվաստակ, ձրիակեր անդամ չկար։ Արշավախմբի գործունեության հիմքում դրված էր՝ մեկը բոլորի, իսկ բոլորը մեկի համար սկզբունքը։

Ուսանելի և օրինակելի էր նաև մի շատ լավ սովորույթ. նույն օրվա հավաքած քարա-հանքանյութային նմուշները մշակել ու պիտակավորել մինչև հաջորդ աշխատանքային օրը։

Մի շարք երկար ու ձիգ լարված աշխատանքի տարիները տվեցին իրենց արդյունքը. լույս տեսավ մետաղածնության հարցերին նվիրված Հովհաննես Մաղաքյանի արժեքավոր մենագրությունը, որը բացի տեսական մեծ նշանակությունից, գործնական տեսակետից լուրջ ներդրում էր լեռնա-քիմիական արդյունաբերության մեջ։

Այդ աշխատության գիտական նշանակությունը կայանում է նրանում, որ Հովհաննես Մաղաքյանը մանրազնին մշակած ու վերծանած հարուստ փաստական նյութի հիման վրա Հայկական ՍՍՀ տարածքի համար հիմնավորեց մի շարք կառուցվածքա-մետաղածնական գոտիների առկայությունը, գոտիներ, որոնք բնորոշ են իրենց երկրաբանական զարգացման ու մետաղածնության ուրույն առանձնահատկություններով։ Դրանց թվին են պատկանում Ալավերդի-Զափանի պղինձ-կոլչեդոնային, Սևան-Ամասիայի ուլտրաբազիտների, Փամբակ-Զանգեզուրի պղինձ-մոլիբդենային և այլ գոտիներ։ Վերջիններիս սահմաններում նա եզրագծել է մի շարք հանքային շրջաններ, որոնց սահմանները պայմանական են, քանի որ մեր Հանրապետության տարածքի կեսից ավելին ծածկված է երիտասարդ հրաբուխների արտավիժման նյութերով ու ժամանակակից նստվածքներով։ Այդ հանքային շրջանների պայմանական սահմաններն արտացոլում են մեր գիտելիքների լոկ ժամանակակից մակարդակը։

Հայկական ՍՍՀ տարածքի երկրաբանական-կառուցվածքային և կանխատեսում-մետաղածնական մասնատումը կովկասյան տարածում ունեցող մի շարք գոտիների, վերջին ժամանակներս որոշ մասնագետների կողմից կասկածի տակ է դրվում, ոմանք շատ հեռու գնալով նույնիսկ ժխտում են մետաղային օգտակար հանածոների տեղաբաշխման օրինաչափություններն ըստ գոտիների։ Այդ հետազոտողները մասնավորապես նշում են հակակովկասյան ուղղության խախտումների առկայության որոշ թերագնահատումը հանքայնացման տեղայնացման գործում։

Արդարությունը պահանջում է նշել, որ իսկապես հանքայնացումը վերահրսկվում է կովկասյան և հակակովկասյան ուղղությունների տեկտոնական խախտումների խաչաձևման հանգույցներով, որոնք վերադրվում են կովկասյան ուղղության ծալքավոր կառուցվածքների վրա, ընդ որում, որպես անհրաժեշտ պայման, պետք է առկա լինեն դեռքիմիական մասնագիտացված մագմատիկ ապարների համալիրներ։ Այս դրույթը, որը երբեք չի բացառվել Հովհաննես Մաղաքյանի կողմից, ավելի է հաստատում ու ճշտում մետաղային

հանքավայրերի գոտիական տեղաբաշխման նրա առաջ քաշած օրինաչափությունները։

Ի դեպ, երկրաբանա-կառուցվածքային գոտիների սահմանների մասին։ Այդ գոտիները միմյանցից անջատվում են բնական սահմաններով. օրինակ, Ղափանի գոտին Փամբակ-Զանգեզուրի գոտուց զատվում է Խուստուփ-Գիրաթաղի խախտումով, Սևան-Ամասիայի գոտին Ալավերդի-Ղափանի գոտուց՝ ռեգիոնալ վրաշարժերի սիստեմով և այլն։ Սակայն, դա չի նշանակում, որ այդ բնական սահմաններն ամբողջ երկարությամբ ու խորությամբ իրենցից ներկայացնում են երկաթ-բետոնյա անհաղթահարելի պարիսպներ, որոնք ի վիճակի լինեին փակելու հանքաբեր լուծույթների շարժման ճանապարհը մի երկրաբանա-կառուցվածքային գոտուց դեպի մյուսը։

Այդ առումով, այս կամ այն գոտու համար մետաղածնական տեսակետից «խորթ» հանքայնացման առկայությունը չպետք է զարմանք պատճառի, օրինակ՝ մոլիբդենի հանքայնացումը Ղափանի և Ալավերդու հանքագաշտերում, թեպետ այն կարող է ոչ մի «ազգակցական» կապ չունենալ Քաջարանի և այլ վայրերի մոլիբդենի հետ։

Մեծ է Հովհաննես Մաղաքյանի դերը երկրաբանական կադրեր պատրաստելու գործում։ Նա երկար տարիներ մասնագիտական առարկաներ է դասավանդել Լենինգրադի լեռնային ինստիտուտում և Երևանի պետական համալսարանում։ Առավել արժանի է դրվատանքի նրա ակտիվ գործունեությունը բարձրորակ երկրաբան գիտնականների կադրեր պատրաստելու գործում. ինչպես ասպիրանտուրայի, այնպես էլ անհատական ուսո մնասիրությունների միջոցով։

Հովհաննես Մաղաքյանի անունը անխզելիորեն կապված է ՀՍՍՀ ԳԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի ընդերքում մետաղածնության ուրույն ուղղություն ստեղծելու հետ, ուղղություն, որը նրա ղեկավարությամբ հաջողությամբ զարգացնում է գիտնականների մի թվաշատ կոլեկտիվ։

Ես իմ պարտքն եմ համարում նշելու, որ Հովհաննես Մաղաքյանի հետ վերին աստիճանի հաճելի է աշխատել և ուսումնասիրել մեր հանրապետության ընդերքի մետաղային հանածոները։ Իսկ ով նրա հետ աշխատում է, մեկընդմիշտ պետք է իմանա նրա նշանաբանը. չիմանալը ամոթ է, իսկ իմանալ չցանկանալը՝ կրկնակի ամոթ։

Վերջացնելով խոսքս, Հ. Գ. Մաղաքյանին սրտանց շնորհավորում եմ պանծալի 60-ամյակի կապակցությամբ, ցանկանում եմ քաջառողջություն, երկրաբանական երկարակեցություն և նորանոր հաջողություններ ի փառս հայրենական գիտության։